ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վրաստանի և Իմերէթի Հայոց վիճակային կոնսիստորիան կը ծանուցանէ ԹԻՖԼԻՍԻ Հայազգի բարեպաշտոն ժողովրդին թէ կարգադրված է ներկայ ամսոյ 12–ին ՇԱԲԱԹ օրը, առաւօտեան 11–րդ ժամին տանել վիճակիս 'ի տէր հանգուցեալ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ մարմինը իր բնակարանից ՎԱՆՔԻ ՄԱՅՐԵԿԵՂԵՑԻՆ, և հետևեալ օրը յետ պատարագին, որ կը սկսուի առաւօտեան ժ. 11–ից, կատարել թաղման հանդէսը նոյն եկեղեցու գաւթում:



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատներում և դրօգիստների մօտ: Գլխաւոր դէպօ նիւթի հնարող Ֆարմացեւտի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլէկտօրալնի փողոց, № 35: Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է զգուշանալ խարդախումներից:

3—25 (1) Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ

Մ. Միանսարեանցի ի նորոյ յիշեալ տպագրութիւնների ամեն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Հայոց Վանքի Մեծ և փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 4/2, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով:

1. Հայկական Բնար, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . 70 կ.

4 Հազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 րուբլու:

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . 20 կ.

1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 րուբլու:

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես: 6 հազար օրինակից կը լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 րուբլու: . . . . 10 կ.

4. Կուճատ մելանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, դիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը: № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. տոպան, կամ 480 թերթը, 4 րուբլի, մօտ 340 տոպ, մօտ 1360 րուբլու: Թերթը մի կոպէկից պակաս:

5. Տողաշարներ և տողացանցեր մեծ թարգա, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 րուբլու, թերթը . . . . 5 կ.

6. Կոմբ ուսուցչապետի և անգլիացւոց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300: . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 րուբլու:

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 րուբլու:

Տպագրողը ինքը բնակվում է Ս. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Басейной.

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԻՒՂՈՒՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Գ. ՄԻՆԱՍ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ դօկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Դրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Անանի Քաղարեանց և իր որդիքը ցաւօք սրտի յայտնելով առաջինի ամուսնի և երկրորդների հօր՝ Սերգէյ Արտեմիչ Պետրոսեանի մահը, խնդրում են ծանօթներին և բարեկամներին գալ յուղարկաւորութեան հանդիսին, ապրիլի 12–ին, շաբաթ օր, Հաւլաբարի Ս. Մինաս եկեղեցու մօտ իր սեփական տանը, որտեղից ննջեցեալին կը տանեն Ս. Մինաս եկեղեցին, առաւօտեան 9 ժամին:

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է I և II գիլդիայի վաճառականներին, որ 1) ներկայ ապրիլի 24–ին առաւօտեան 11 ժամին, առևտրական Վարչութեան բնակարանի մէջ Աղաբէգովի (Խատամանովի) տանը պէտք է լինեն Առևտրական Վարչութեան ՊԱՇՏՕՆԵԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ընտրութիւնները: Պէտք է ընտրվեն մի ՆԱԽԱԳԱՀ, նախագահի մի ԸՆԿԵՐ և երեք ԱՆԴԱՄՆԵՐ: 2) որ ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն տեղացի վաճառականներ (յօդ. 84 առևտրական իրաւունքի հարկերի պօլօժենիայի), բացի անձինքներից, որոնք ընդհանրապէս իրաւունք չունեն ընտրութիւններին մասնակցելու, օրինակ 25 տարեկան հասակին չը հասածները, յանցանքների պատճառով դատաստանին ենթարկվածները և այլն:

1—3

Վաճառվում է նոր հրատարակված «Յիսուսի Տաւիղ» Փրէյզուսի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում: Գրքոյկի գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետևեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

ՍԱԼԵԱՆԻՑ նոր ստացվեցաւ ԹԱՐՄ ՀԱՏԻԿԱՒՈՐ ԽԱՒԻԱՐ: Ծախվում է Միքայէլեան ԿԱՄՈՒՐՋԻ վրա, ՄԻՐԶՈԵՎԻ շինութեան մէջ № 11 և 12, Ա. ՄԻՐՈՒՄՈՎԻ խանութում:

1—6

Դուրս եկաւ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԴԱՇՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՄԲ

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուզանաճեանցի: Իւրաքանչիւր օրինակի գինն է մէկ րուբլի: Վաճառվում է յօգուտ Վանայ սովատանջների Թիֆլիսի բոլոր երաժշտական մագազիններում: Գումարող առնողներին զիջումն կը լինի: Օտարաքաղաքացիք դիմում են հետևեալ հասցէով. Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянъ, на Петхайнской улицѣ, собственный домъ № 13. Ցանկացողները ստանալ միասին և «Յիսուսի Տաւիղ» երգարանը, պէտք է ուղարկեն մէկ րուբլ երեսուն կոպ.:

Յունվարի 31–ին 1880 Թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան կանոնադրութիւնը: Այս ընկերութիւնը մարտի 9–ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իր վարչութեան և խմբագրական մասնաժողով:

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մովսէս Թաւաղեանին Թիֆլիսի Առևտրական բանկը առաւօտեան 9–ը ժամից մինչև 2 ժամը: Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ՝ պարոն Արգար Յովհաննիսեանին: Վարչութեան ատենադպիր Ա. Բիշմիշեան:

8—10

Տպագրութեան համար պատրաստ են «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ծշմարտութեան) Պրէսկոտի, «Աբրահամ Լինկօլն» սորուկներին ազատող Վիլհելմ Հօֆմանի, և Մօլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայթարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մօլիէրի հետ «Տարտիւֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ իմ ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՈՆԴԻՏԵՐԻ և ՀԱՑԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրով, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կոնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ. Օտար քաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОЙ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշգութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով. կոնֆէկտների գինը փունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

Անցած փետրվարի 17–ից նոտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2–դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվեն ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԹԻՒԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մասնաւոր և բանկային վէկսէլներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, ես անուավեր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2–դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՕՎ:

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ Վ. ԿԱՅԱԿԱՆ ունի և խօսում է ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻԱՑԻՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները ԴԱՍԵՐ Է փնտռում: Հասցէն ԿԱՄԵՆԴԱՆՏՍԿԱՅԱ փողոց, տուն ՇԱԽՄՈՒՐԱԴՕՎԻ, № 73:

2—4 (2)

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9–ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալէվիչ ներքին հ., Բօտխնեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտէմբօրսկի վեներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խիրուրգիական հ., Վ. գօրօվ վեներական և բողազի հ., Բէյթ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկովսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւններ:

Հինգշաբթի. Վ. գօրօվ վեներական և բողազի հ., Բօտխնեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և ստամոքսի օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկևիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտօվ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրօվ վեներական և կաշու հ., Բարայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բարօվ կուրծքի հ., Ետնկօվսկի վեներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. գօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9–ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օրբէլի աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Дозволено Цензурою 10 Апрѣля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխէլսօնի Типографія А. А. Михельсона